ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 փետրվարի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

13
(2863)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՊԱՀԱՆՋ ԿԱ. ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԸ ՊԵՏՔ Է ՀԵՌԱՆԱ

ՔՊ-ականները իրենց թիմի ներսում ծպտյալ եւ բարձրաձայն պահանջում են ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի հրաժարականը. իշխանականներն այս հարցը նաեւ Փաշինյանի առջեւ են դրել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում այս օրերին թեժ քննարկվում է, որ Ալեն Սիմոնյանը պետք է անպայման հեռանա: Ըստ ՔՊ-ականների՝ Ալեն Սիմոնյանն ու նրա հետ փոխկապակցված անձինք բազմիցս հայտնվել են սկանդալների կենտրոնում, բայց մնացել են անպատիժ: «Ժողովուրդ» օրաթերթն առաջինն էր գրել, որ Ալեն Սիմոնյանի կնոջ ղեկավարած հեռուստաալիքը՝ Freenews TV-ն, ամիսներ շարունակ չի վճարել Հայաստանի հեռուստատեսության եւ ռադիոհաղորդիչ ցանցին ամսական 1.5 մլն դրամ վճարը: Freenews TV ընկերության պարտքը կազմել է 23,3 մլն ՀՀ դրամ: Եւ անգամ հրապարակումներից հետո չեն վճարել պետության պարտքերը՝ օգտվելով իշխանական իրենց կարգավիճակից: Օրեր առաջ էլ կալանավորվեց Ալեն Սիմոնյանի եղբոր կինը՝ Անի Գեւորգյանը, որը կոռուպցիոն սկանդալի կենտրոնում է հայտնվել. իրավապահ համակարգի ձեւակերպմամբ՝ նա մեղադրվում է պաշտոնատար անձանց օժանդակելու համար պաշտոնական դիրքի չարաշահման հարցում: ՔՊ-ում ասում են՝ պետք է վերջ դրվի Ալեն Սիմոնյանի շուրջ ձեւավորված այս ամենաթողության մթնոլորտին, քանի որ դա թիմի վարկանիշին է հարվածում: Որոշ ՔՊ-ականներ Ալեն Սիմոնյանի հրաժարականի հարցը դրել են նաեւ Նիկոլ Փաշինյանի առաջ: Իրենց այս քայլն իշխանականները բացատրում են այսպես. Ալեն Սիմոնյանը դեռ նախորդ տարի՝ ապրիլին, Երեւանի կենտրոնում թքեց քաղաքացու վրա, մնաց անպատիժ՝ չնայած հանրության շրջանում ձեւավորված խիստ դժգոհություններին: Իսկ հիմա, երբ հարցը հասել է կոռուպցիային, Ալեն Սիմոնյանը պետք է գոնե հիմա պատժվի: Բանն այն է, որ Փաշինյանն իր թիմակիցներին բազմիցս զգուշացրել է, որ կոռուպցիոն գործընթացներում ներգրավվելը չի ներվելու ոչ մեկին, իսկ հիմա Ալեն Սիմոնյանը ներվում է: Ահա այս իրավիճակը խիստ վրդովեցրել է ՔՊ-ականներին, ու Փաշինյանից պահանջել են հեռացնել Սիմոնյանին: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց նաեւ ԱԺ նախագահի խոսնակ Նելլի Ղուլյանին՝ պարզելու, թե ինչ դիրքորոշում ունի նա վերջին աղմկահարույց իրադարձությունների մասով, օրինական համարում է արդյոք իրավապահների գործողությունները: «Որեւէ մեկնաբանություն չունենք այս պահին. եթե ԱԺ նախագահը ցանկանա դիրքորոշում հայտնել, ապա դա կարվի»,-ասաց նա: Այսինքն՝ ասելիք չկա:

Խորհրդարանական երկրի գլուխը համարվող Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանն արդեն 5 օր է՝ գտնվում է կոռուպցիոն սկանդալի կիզակետում: Նրա ընտանիքի անդամը՝ եղբոր կինը, կալանավորվել է կոռուպցիոն բացահայտումների գործով, եւ առ այսօր Ալեն Սիմոնյանը, որ օրերս հանդիպել էր ուսուցիչների հետ ԱԺ-ում, որեւէ բացատրություն, պարզաբանում չի տվել ՀՀ քաղաքացիներին, ներողություն չի խնդրել, որ ժողովրդավարական մեր երկրում իր ընտանիքը կոռուպցիայի մեջ է թաթախվել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանության ներսում պայքար կա 2026թ.-ի ընտրություններին ընդառաջ. Ալեն Սիմոնյանը, ԱԽՔ Արմեն Գրիգորյանը եւ էլի մի քանիսը սկսել են իրենց պատկերացնել Նիկոլ Փաշինյանին փոխարինողի դերում՝ առաջինը՝ ռուսական, երկրորդը՝ արեւմտյան աջակցությամբ: Եւ այնքան լուրջ են վերաբերվել իրենց պատկերացումներին, որ սկսել են իրար վրա իշխանական կուլիսներում ցեխ շպրտել: Իշխանական մեր աղբյուրները փոխանցում են, որ Ալեն Սիմոնյանը տեւական ժամանակ է՝ փորձել է Նիկոլ Փաշինյանի մոտ նսեմացնել ԱԽՔ Արմեն Գրիգորյանի դերը, վերջինս էլ իր հերթին է Ալեն Սիմոնյանի դեմ աշխատել՝ ուղղություն տալով, որ «Սիներջի» ընկերության մրցութային գործընթացներում Ալեն Սիմոնյանի ընտանիքը մասնակցություն ունի, որի արդյունքում իրավապահները հետքի վրա են դուրս եկել: Իհարկե, դժվար է պնդումներ անել, թե որքանով են իշխանության կուլիսներից «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերը իրական, բայց փաստ է մի բան, որ Ալեն Սիմոնյանի կնոջ ղեկավարած Freenews TV-ն 24 ժամով եթերազրկված է ԲՏԱ նախարար Մխիթար Հայրապետյանի հրամանով, քանի որ պետությանը կուտակած պարտքերը չի մարում, եղբոր կինը կալանավորված է, եւ էլի կան դեպքեր, որոնց դեռ կանդրադառնանք:

ԱԺ փոխնախագահ Հակոբ Արշակյանը նոր սկանդալի կենտրոնում է հայտնվել: Երբ նա կոչ արեց կալանավորին ծափերով ողջունել, գործընկերները տարակուսել են ՔՊ-ում: Ինչի՞ մասին է խոսքը. փետրվարի 2-ին Երեւանում տեղի ունեցած «Արհեստական բանականությունը՝ բիզնեսի համար» համաժողովին ԱԺ փոխնախագահ Հակոբ Արշակյանն իր ելույթի ընթացքում հիշեց էկոնոմիկայի նախարարության կոռուպցիայի գործով կալանավորված «Սիներջի» ընկերության տնօրեն Աշոտ Հովհաննիսյանին գովերգող հայտարարություններով: Հակոբ Արշակյանը ներկայացրեց Հովհաննիսյանի՝ վերջերս հրատարակված «Վերելք» գիրքն ու առաջարկեց ներկաներին ծափահարել նրան: Հիշեցնենք, որ Աշոտ Հովհաննիսյանը փետրվարի 1-ին 2 ամսով կալանավորվել էր, քանի որ էկոնոմիկայի նախարարության ութ պաշտոնյաներ կասկածվում են, իրավապահների ձեւակերպմամբ, առերեւույթ կոռուպցիոն չարաշահումների գործով: Ստացվում է՝ մի կողմից իրավապահները Աշոտ Հովհաննիսյանին կալանավորելու որոշում են կայացնում, իրավական գործընթաց են սկսում նրա նկատմամբ, իսկ, մյուս կողմից, ԱԺ փոխխոսնակն իր ելույթում գովերգում է կոռուպցիայի համար մեղադրվող նույն պաշտոնյային՝ այսպիսով ծաղրելով նաեւ իրավապահներին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հակոբ Արշակյանի այս ելույթը մեծ աղմուկ է բարձրացրել ՔՊ-ում, ԱԺ փոխնախագահը նկատողություն է ստացել իր թիմակիցների կողմից, որոնք Արշակյանի այս արարքը տարակուսելի են համարել: Բացի այդ, ԱԺ պաշտոնական կայքում էլ Հակոբ Արշակյանի ելույթի այդ հատվածը խմբագրված է, չկան ծափողջույնները: «Ժողովուրդ» օրաթերթը մեկնաբանության համար դիմեց նաեւ ԱԺ փոխնախագահ Հակոբ Արշակյանին: Վերջինս ասաց, որ տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը:



«Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ-ական աղբյուրներից տեղեկացավ, որ կրթության ոլորտում քաոսը կրկին սրվել է: Դեռ չէին մարսել նոր չափորոշիչներով տպագրված դասագրքերի ձախողման փաստը, այժմ հերթը պատմության դասագրքերինն է: Դեռ դպրոցների ստեղծման սկզբից պատմության նոր տպագրված դասագրքերը կոչվել են «Հայոց պատմություն»: Հիմա, երբ Նիկոլ Փաշինյանը հրապարակեց անանուն մասնագետների կարծիքը, թե ճիշտը «Հայաստանի պատմություն»-ն է, ոչ թե «Հայոց», դրանից հետո ԿԳՄՄՆ Ժաննա Անդրեասյանին հարցրել է. «Իսկ ինչո՞ւ Հայոց պատմությունը չենք անվանել Հայաստանի պատմություն»: Այս մասին բարձրաձայնվել է նաեւ Կառավարության նիստերի ժամանակ, իսկ ԿԳՄՄ նախարար Ժաննա Անդրեասյանը ոչ մի բացասական մեկնաբանություն չի տվել: Նախարարը գլխիկոր լսել եւ չի հակաճառել Փաշինյանին: Օրեր անց Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հայտնվեց նոր նախագիծ, որով «Հայոց պամություն» դասագիրքը նախատեսվում է փոխարինել «Հայաստանի պատմություն» տերմինով: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները հայտնում են, որ նախարար Ժաննա Անդրեասյանը չի փորձել հետ կանգնեցնել Փաշինյանին այդ մտքից՝ բացատրելով, որ գոնե փոփոխությունները պետք է սկսել նոր ուստարուց: Նախարարի այս լռելյայն համաձայնությունը ԿԳՄՄՆ մասնագետների մոտ տարակուսանք է առաջացրել: Տեղեկացանք, որ շատ դպրոցներում բունտ է հասունանալու Հայոց պատմության դասագրքերի պղծման մասով:

ԶՐՈՒՅՑ

«ԻՐԵՆՑ ՄՈՏ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՍՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՆ»

Փետրվարի 7-ի արտահերթ նիստում Երեւանի ավագանին կքննարկի ընդդիմադիր 5 անդամներին մանդատից զրկելու հարցը: Խոսքը Հայկ Մարությանի, Նարինե Հայրապետյանի, Զարուհի Փոստանջյանի, Սոնա Աղեկյանի եւ Գեւորգ Ստեփանյանի մասին է: Երեւանի ավագանու 5 անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման որոշման նախագծի հիմքում նիստերին նրանց բացակայությունն ու քվեարկություններին չմասնակցելն է: ArmLur.am-ը այս հարցի շուրջ զրուցել է Երեւանի ավագանու անդամ Զարուհի Փոստանջյանի հետ:

-Տիկին Փոստանջյան, իշխանությունները որոշել են Ձեզ եւ ավագանու ընդդիմադիր եւս չորս անդամների զրկել մանդատից: Ի՞նչ կասեք այս մասին, ինչպե՞ս կգնահատեք այս որոշումը:

-Գարնանային սրացումներ են իշխանությունների մոտ, որոշել են նոր հարձակում սկսել իմ նկատմամբ ու ավագանու անդամի մանդատից զրկել: Նրանց այս հապճեպ կայացրած որոշումն արդեն խոսում է այն մասին, որ իրենց ղեկավարող կենտրոններից մեկում է այս որոշումը կայացվել է, ու սկսել են իրագործել այդ հրահանգները:

-Իշխանություններն իրենց այս քայլը հիմավորում են նրանով, որ ավագանու նիստերին չեք մասնակցել, այսինքն՝ բացակայություններն են պատճառը:

-Եթե հիմք են վերցնում բացակայությունները, ապա դրան պետք է նախորդեն որոշ գործընթացներ: Իրենց պատվիրատուների ձեռագիրն է, մնացել- մնացել են ու հիմա որոշել են, որ պետք է ավագանու ընդդիմադիր անդամների նկատմամբ հարձակում գործել, օրենքի կոպիտ ոտնահարմամբ, փնթի ու կոպիտ գործելաոճով ինչ -որ քայլեր են անում մեր նկատմամբ:

-Տիկին Փոստանջյան, մանդատից զրկելու համար անհրաժեշտ է լինելու ավագանու 33 անդամի համաձայնություն: Ի՞նչ եք կարծում, իշխանություններին կհաջողվի՞ ապահովել անհրաժեշտ ձայներ ու հասնել իրենց վերջնական նպատակին:

-Եթե իրենց նպատակը դա է, ապա իրենք պարտված մարդիկ են. սա բացարձակ ոչ մի ազդեցություն չի կարող ունենալ իմ գործունեության վրա, ոչ էլ իրենց վիճակը կարող է բարելավվել. իրենց մոտ սպոնտան գարնանային սրացումներ են պարզապես:

-Իսկ դուք արտահերթ նիստին մասնակցելո՞ւ եք:

-Ոչ, ապօրինի օրակարգով նիստ է. ովքեր որ դա նախաձեռնում են, թող իրենք իրենց վարքագիծը նայեն, որ պաշտոն են ստանձնել ապօրինի կերպով: Ակնհայտ է, որ այս ամենն արվում է հանրության ուշադրությունը շեղելու համար:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՕՐՀՆԵՑ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ

Փետրվարի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նախորդ օրը Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում քահանայական կոչման արժանացած տասնմեկ քահանաներին՝ առաջնորդությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Քաբայանի եւ Իրաքի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Օշական եպիսկոպոս Գյուլգյուլյանի:

Ձեռնադրող Օշական Սրբազանը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, իր երախտագիտությունը հայտնեց քահանայական ձեռնադրություն կատարելու պատվին արժանացնելու համար:

Նորաօծ եկեղեցականների անունից Հայոց Հայրապետին երախտագիտության խոսք ասաց Արժանապատիվ Տ. Կոմիտաս քահանա Ղեւոնդյանը՝ հավաստիացնելով, որ ամեն ջանք կներդնեն իրենց նվիրյալ ծառայությունը բերելու Հայ Եկեղեցու անդաստանում:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց նորաօծ հոգեւորականներին՝ շնորհավորելով վերջիններիս քահանայական ձեռնադրության առիթով:

Վեհափառ Հայրապետը հորդորեց նորընծա եկեղեցականներին հոգեւոր կոչման բարձր գիտակցությամբ ու սիրով լծվեն իրենց առաքելությանը՝ էլ ավելի բարձրացնելով Հայ Եկեղեցու բարի համբավն ու հեղինակությունը:

Հայոց Հովվապետը, ընդգծելով, որ Հայաստանն ու հայ ժողովուրդն ապրում են դժվարին ժամանակաշրջանում, պատգամեց նորաօծներին արդյունավորել իրենց հոգեւոր սպասավորությունը հոգեխնամ ու կրթադաստիարակչական գործունեությամբ, Ավետարանի եւ սուրբ հայրերի պատգամների համաձայն հայորդիների մեջ հաստատել ու զորացնել սերը Հայ Եկեղեցու եւ Հայրենիքի նկատմամբ:

Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ քահանա հայրերն իրենց զորավոր հավատքով, նվիրյալ ու անսակարկ ծառայությամբ կկարողանան իրականություն դարձնել հայ ժողովրդի զավակների իղձերն ու տեսիլքներն ապագայի նկատմամբ:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը բերեց ձեռնադրող Սրբազան Հորը, ինչպես նաեւ Մայր Աթոռի հոգեւոր կրթական հաստատություններին ու լուսարարապետությանը եկեղեցականների պատրաստության եւ ձեռնադրության գործում ներդրած ջանքերի համար:

Վերջում Նորին Սրբությունը «Պահպանիչ» աղոթքով օրհնեց քահանա հայրերին եւ ընծայեց «Մաշտոց» ծիսարաններ:

ՈՐՈՇՄԱՆ ԺԱՄԿԵՏ՝ ՄԻՆՉԵՎ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ը

ՔՊ-ական ավագանու անդամները մի քանի օր ժամանակ ունեն որոշում կայացնելու՝ կա՛մ պետք է մանդատը վայր դնեն, կա՛մ թողնեն իրենց պաշտոնը:

Այսպիսով, թեեւ ՔՊ-ն բացակաների թույլատրելի քանակը հատած ընդդիմադիր ավագանու անդամների դեմ է ակտիվ պայքար սկսել, բայց սեփական թիմի ներսում էլ օրինախախտների պակաս չկա:

Բանն այն է, որ Երեւանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ավագանու մի շարք անդամներ ավագանու անդամի պաշտոնի հետ անհամատեղելի պաշտոններ են զբաղեցնում: Այսպես՝

1. ավագանու իշխանական անդամ Վլադիմիր Կիրակոսյանը համատեղությամբ նաեւ Անտառային կոմիտեի նախագահն է,

2. Նատալյա Սինորյանը ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի օգնականն էր, իսկ հիմա՝ ՔՊ խմբակցության փորձագետը,

3. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նախկին ղեկավար, ավագանու անդամ Արման Բարխուդարյանը ԱԺ նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանի խորհրդականն է,

4. Ջինա Չալիկյանը ԱԺ նախագահի ռեֆերենտն է, կամ Լեւոն Լեւոնյանը, որը նաեւ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնականն է:

«ՏԻՄ մասին» ՀՀ օրենքը հստակ սահմանում է ավագանու անդամի՝ այլ պաշտոններ զբաղեցնելու սահմանափակումը.

«Համայնքի ավագանու անդամը չի կարող՝

1) աշխատել նույն համայնքի ղեկավարի աշխատակազմում կամ մարզպետարանում, համայնքային կամ մարզային ենթակայության ձեռնարկությունների եւ կազմակերպությունների ղեկավար,

2) լինել մեկ այլ համայնքի ղեկավար կամ ավագանու անդամ,

3) աշխատել իրավապահ մարմիններում, ծառայել զինված ուժերում»:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Հայաստանի կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին են դիմել Երեւանի քաղաքապետարանից՝ խնդրելով պարզաբանել, թե օրենքը ինչ սահմանափակումներ է ենթադրում ավագանիների համար, արդյոք նրանք կարող են շարունակել մնալ ավագանու անդամներ: Մեր աղբյուրների հաղորդմամբ՝

հանձնաժողովից մինչեւ փետրվարի 15-ը ժամանակ են տվել՝ իշխանական ավագանու անդամները կա՛մ ավագանու մանդատից պետք է հրաժարվեն, կա՛մ իրենց զբաղեցրած հանրային պաշտոններից:

Փաստացի ՔՊ-ական ավագանու անդամները զուգահեռ անհամատեղելի պաշտոն են զբաղեցնում:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, արձանագրելով այս խախտումը, մինչեւ փետրվարի 15-ը ժամանակ է տվել քաղաքապետարանին:

«ՀԱՅԱՔՎԵ»-Ն՝ ՆՈՐ ՓՈՒԼՈՎ

Փետրվարի 6-ին «ՀայաՔվե» նախաձեռնության խորհուրդը կհայտարարի Սահմանադրական շարժում ձեւավորելու եւ պայքարի քայլերի մասին՝ ուղղված ՀՀ Անկախության հռչակագրի եւ Մայր օրենքի պահպանմանը:

Բացի սա, ԱԺ-ում այս շաբաթ կքննարկվի նաեւ ԱԺ «Հայաստան» խմբակցության հեղինակած հայտարարության նախագիծը՝ «Հայաքվե» քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության առաջադրած օրակարգային հարցի մասին:

Հայտարարության նախագծի հեղինակը «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանն է:

Հիշեցնենք, որ խորհրդարանը դեկտեմբերի 5-ին մերժել էր «ՀայաՔվե» նախաձեռնության օրենքի նախագիծը, որով ՀՀ 58 հազար քաղաքացիներ առաջարկում են քրեական պատասխանատվություն նախատեսել պաշտոնատար անձի կողմից Լեռնային Ղարաբաղը այլ պետության կազմում ընդունելու կամ ճանաչելու եւ Հայոց ցեղասպանությունը ժխտելու վերաբերյալ ցանկացած արարքի համար:

ԿԱ՞Մ ԷՍԿԱԼԱՑԻԱՅԻ ՎՏԱՆԳ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վլադիմիր Վարդանյանը երեկ անդրադարձավ ԱՄՆ դեսպանատան այն հայտարարությանը, որով դեսպանատունը զգուշացում էր տարածել Հայաստանում գտնվող իր քաղաքացիների անվտանգության ու տեղաշարժի համար:

«Ցանկացած պարագայում ամենավտանգավոր բանը տեղեկատվությունը կիսատ-պռատ ներկայացնելն է. ԱՄՆ-ն տարբեր երկրներում համապատասխան security alert-ներ են տալիս, եւ եթե ուշադրություն դարձնեք նախորդիվ տված alert-ներին, սա ռեժիմի մեղմացում էր որոշակի տարածքների համար: Ոչ թե ինչ-որ նոր վտանգի գաղափար կար, այլ ընդհակառակը՝ ռեժիմի դյուրացում կար որոշակի հատվածների վերաբերյալ: Այսպիսի հայտարարություններ պարբերաբար արվում է ԱՄՆ դեսպանության կողմից, պարզապես պետք է համադրել նոխորդիվ արվածի հետ: Շատ քաղաքացիներ դիմում են ինձ այս հարցով, երեւի թե այստեղ կոմունիկացիան շատ ավելի կարեւոր է, որ մենք հստակ հասկանանք, որ սա սովորական պրակտիկա է: Մենք չենք հետեւում, բայց եվրոպական երկրների հետ կապված էլ շատ դեպքերում նման հայտարարություններ լինում են:

Օրինակ՝ ասվում է՝ խուսափեք լինեն այս քաղաքում, որովհետեւ այնտեղ նախատեսվում են հանրահավաքներ կամ գործադուլներ: Սա տարածված պրակտիկա է: Բայց քանի որ մեզ մոտ շատ զգայուն է ցանկացած անվտանգային հարց, այս հարցն էլ զգայուն է ընկալվում»,- ասաց նա՝ պատասխանելով լրագրողների հարցին, թե կա արդյոք նոր էսկալացիայի վտանգ, որը կապ ունի դեսպանատան հայտարարության հետ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԵՐԿԻՐ»

Հայաստանի Հանրային ռադիոյի գործադիր տնօրեն Գարեգին Խումարյանը սոցցանցի իր էջում գրել է.

«Հանրային ռադիոյի այս տաղավարում հունվարի 31-ին տեղի ունեցածը լավ ժուռնալիստիկա չէր: Մեղավորը ես եմ: Հարգելի գործընկերս՝ Բարեղամ Ղուկասյանը, բացառիկ մասնագետ է, բայց նեղ ուղղվածության՝ լուրերի հաղորդավար է: Ու երբ ամիսներ առաջ առաջարկեցի նրան հարցազրուցավարի դերն էլ փորձել, նա, որքան ուժ ուներ, դիմադրում էր: Իսկ ես, ընդհակառակը, վստահ էի, որ կբացվի, ու պնդում էի, որ «Անվտանգային միջավայր» հաղորդաշարը հենց ինքը վարի:

Վարչապետի մասնակցությամբ թիվ 22 թողարկման մասին Բարեղամի հետ երկար ենք խոսել ու եկել ենք այն եզրակացության, որ առաջիկայում նա կկենտրոնանա լուրերում իր աշխատանքի վրա, կանի այն, ինչն իսկապես գերազանց է անում, իսկ հարցազրույցների ժանրին կվերադառնանք, երբ զգանք, որ պատրաստ է:

Հազիվ եմ համոզել, որ աշխատանքից ազատվելու դիմումը հետ վերցնի:

«Անվտանգային միջավայր» հաղորդումը հետայսու այլ մարդ կվարի: Դեռ չգիտեմ՝ ով:

Ներողություն եմ խնդրում Հանրային ռադիոյի այն ունկնդիրներից, ում սպասելիքները չարդարացրինք: Վարչապետի հետ մեր հարցազրույցն անկասկած շատ ավելի լավը կարող էր լինել:

Հիմա բուն տեղի ունեցածի մասին:

Հունվարի 31-ին այս տաղավարում ծավալված ու մեր ռադիոլսողներից շատերի մոտ հարցեր առաջացրած խոսույթը քաղաքական չէր: Այն «խորհուրդ խորին»-ի շուրջ էր՝ մեր երկրի գոյաբանական իմաստների ու մեր ինքնության շուրջ:

Այն ծավալվել է իմ ղեկավարած լրատվամիջոցում, եւ որպես տան տեր պիտի մի երկու բառ էլ ես ասեմ:

Անցած շաբաթ այս տաղավարում մեզ առաջարկվել է դադարել լինել այն, ինչ ենք: Մեզ ասվել է՝ թուրքերն ուժեղ են, հայերը՝ թույլ: Թուրքերը կոտորում են հայերին: Այս սիլլոգիզմը պիտի որ ավարտվեր «եկեք ուժեղանանք» դեդուկտիվ եզրահանգմամբ, բայց փոխարենը հնչեց «եկեք դադարենք հայ լինել»-ը:

Տրամաբանական մտավարժանքի տեսանկյունից երկու եզրահանգումներն էլ անխոցելի են ու հավասարապես ճիշտ: Բայց սա շտեմարանային խնդիր չէ:

Թուրքերը կոտորում են հայերին: Եկեք դադարենք լինել հայ, որ էլ չկոտորեն:

Առնվազն մեզ առաջարկվել է խորհել այդ մասին, որովհետեւ Հռչակագիրը, օրհներգը, զինանշանը եւ հաղորդման ընթացքում կասկածի տակ առնված մնացած բաները քաղաքական մեր ինքնության հիմքն են:

Նույն հաջողությամբ, օրինակ, սովի պայմաններում կարելի է մարդկանց առաջարկել դադարել լինել մարդ: Առնվազն խորհել սովի պայմաններում մարդակերության նպատակահարմարության շուրջ:

Ուղղակի երջանիկ կլինեի, եթե իմանայի, որ սա էլ խաղ է՝ մանեւր ժամանակ շահելու եւ ուժեղանալու համար: Բայց ինչպե՞ս ենք մենք օգտագործել արդեն շահած ժամանակը: Ինչպե՞ս ենք մենք օգտագործել անմարդկային ջանքերի, համազգային նվաստացման,

2021-ին՝ Իշխանասարում,

2022-ին՝ Կապանում, Ջերմուկում ու Վարդենիսում,

2023-ին Արցախում

զոհված ավելի քան 400 տղաների ու աղջիկների արյան եւ հարյուր հազար արցախցիների սկզբից սովի մատնվելու, ապա բնավեր լինելու գնով ձեռք բերված անգին այս երեք տարիները:

Շատ հեշտ է, գիտեք, ոչինչ չանել, իսկ հետո ասել, թե ցլերն ուժեղ են: Եկեք հանվենք: Գուցե այդպես նրանք մեզ ոտատակ չտան:

Հնդկական ու ֆրանսիական զենքի մատակարարումները, զինվորականների աշխատավարձերի բարձրացումը, ատեստացիան, «Պաշտպան հայրենյացը», վարժական հավաքները որպես այդպիսին, իրենք իրենցով, կոնտեքստից ու ժամկետներից դուրս բացարձակապես գերազանց են ու անվերապահորեն շլացուցիչ:

Իսկ կոնտեքստի ու ժամկետների մե՞ջ:

Որքանո՞վ է այդ ամենը լուծում վաղը կամ գուցե կես ժամից երկու ճակատով ներխուժման խնդիրը:

Մենք բոլորս տեսել ենք, թե ինչպես էր հնարավոր 92-94 թվականներին երկու տարվա մեջ պատերազմին զուգահեռ ոչ մի բանից բանակ ստանալ:

Ինչո՞ւ սա հնարավոր չէր հիմա՝ վերջին երեք տարիներին: Մանավանդ, որ 2020 թվականի նոյեմբերի 10-ի դրությամբ լավ ծեծ կերած էինք, բայց այնպես էլ չէր, որ բացարձակ 0 էինք, ինչպես 91-92-ին:

Վերացականանք աշխարհաքաղաքական կոնտեքստից: Խոսքը զուտ բանակաշինության ու ավելի լայն իմաստով պետականաշինության տեմպերի ու, որ ամենակարեւորն է, փիլիսոփայության մասին է:

Հռչակագիրը, 3-րդ հանրապետությունը, օրհներգը, պատմական արդարությունը, զինանշանը ու մեր հաղորդման ժամանակ կասկածի տակ առնված այլ բաները մեղավոր չեն, որ մենք չենք կարող լինել սովորական երկիր, իսկ մեր իշխանությունը սովորական երկրի իշխանություն է, ու գուցե նույնիսկ հաջողեր Արեւելյան կամ Կենտրոնական Եվրոպայի երկրներից որեւէ մեկում, որի գոյության իրավունքը որեւէ մեկի կողմից երբեք չի վիճարկվել ու հիմա էլ չի վիճարկվում:

Մեր դեպքն այլ է, ու մեր զինանշանը, օրհներգը, հռչակագիրը... մեր ինքնությունը կրում են այդ այլությունը եւ ձեւակերպում այլեւս երբեք ցեղասպանված չլինելու մեր միակ պետական նպատակը: Մնացածն ածանցյալ է, ու պետք չէ պատճառներն ու հետեւանքները տեղերով փոխել:

Հայաստանը չի կարող լինել սովորական երկիր, որի հերոսը լինելու համար հերիք է բարեխիղճ հարկատու լինել:

Ռաֆայել Լեմկինը՝ «ցեղասպանություն» բառի հեղինակը, իր առաջարկած եզրույթը հետեւյալ կերպ է սահմանում? «Ցեղասպանությունը տարաբնույթ գործողությունների ներդաշնակված ծրագիր է՝ ուղղված ազգային խմբերի գոյության համար կենսականորեն կարեւոր հիմքերի ոչնչացմանը եւ այդ խմբերի ոչնչացմանը որպես այդպիսին»:

Արդյոք հայ անունը կրող ազգային խմբի գոյության համար կենսականորեն կարեւոր հիմքեր չե՞ն Հռչակագրի, Զինանշանի, Օրհներգի խորհուրդներն ու պատմական արդարության զգացողությունը:

Բայց այդ հիմքերով, թե առանց դրանց, մեր հետեւից, միեւնույնն է, գալու են, ինչպես նացիստները եկան անգամ հավատափոխ հրեաների հետեւից: Այնպես որ, բնավ ավելորդ չէր լինի վերջին երեք տարում գոնե վառոդ արտադրել սովորել:

Եվս մեկ անգամ ներողություն եմ խնդրում հաղորդման համար, որն անկասկած պիտի ավելի որակյալ լիներ: Կջանանք դառնալ ավելի լավը:

Հարգանքով՝

Գարեգին Խումարյան

Գործադիր տնօրեն

Հայաստանի հանրային ռադիո»:

«ԷՐԻԿԻ ՄՈՏ»

ԽԱԹԱՐՎԵԼ Է ԲՆԱԿԱՆՈՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Արամուս գյուղում հունվարի 12-ի գիշերը մի քանի անձանց մասնակցությամբ տեղի ունեցած միջադեպի եւ դրա արդյունքում մեկ անձի հրազենային վնասվածք ստանալու դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչությունում նախաձեռնված, ապա ՀՀ ՔԿ հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննված քրեական վարույթի նախաքննությունն ավարտվել է:



«Իրականացված մեծածավալ եւ բազմակողմանի քննությամբ հիմնավորվել է հետեւյալը.

2024թ. հունվարի 11-ին՝ ժամը 18-ից, Երեւան քաղաքի 53-ամյա բնակիչը իր ընկերների եւ ծանոթների՝ թվով 8 անձանց հետ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Արամուս բնակավայրում գտնվող «Էրիկի մոտ» հացատան առանձնասենյակներից մեկում մասնակցել են ընթրիքի, որի ընթացքում օգտագործել են տարբեր տեսակի ոգելից խմիչքներ:

Ժամը 20-ի սահմաններում՝ 53-ամյա տղամարդու եւ ներկաներից մեկի միջեւ սեղանի շուրջ ծավալված խոսակցության ընթացքում, չնչին առիթն օգտագործելով՝ 53-ամյա տղամարդը վերջինիս հասցեին տվել է հայհոյանք: Դրանից առաջացել է վիճաբանություն, որը շարունակվել է դրսում: Վիճաբանության ընթացքում, անտեսելով հացատանը գտնվող բազմաթիվ այլ հաճախորդների ու աշխատակիցների ներկայությունը, իրավական եւ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհանքով, «իրեն ամեն ինչ թույլատրելի է» վտանգավոր եւ արատավոր մտածելակերպի դրսեւորմամբ հացատան բակում շուրջ 10 րոպե տեւած վիճաբանության ընթացքում նրանք հայհոյանքներ եւ անպարկեշտ արտահայտություններ են հնչեցրել միմյանց հասցեին, ձեռքերով ու ոտքերով հարվածներ հասցրել միմյանց մարմնի տարբեր մասերին: Դրա հետեւանքով խաթարվել է հացատան բնականոն աշխատանքը՝ հաճախորդների ու աշխատակիցների մոտ առաջացնելով տագնապի, վախի զգացում, նույնիսկ բազմաթիվ հաճախորդներ, այդ ամենը տեսնելով եւ լսելով, հետագա անախորժություններից խուսափելու նպատակով հեռացել են հացատնից:

Ներկա գտնվող առանձին անձանց միջամտության արդյունքում վիճաբանությունը եւ փոխադարձ ծեծկռտուքը դադարել է, որից հետո 53-ամյա տղամարդը հեռացել է հացատան տարածքից, իսկ նրա հետ եղած մյուս անձինք շարունակել են մնալ հացատանը՝ շարունակելով ընթրիքը:

Այնուհետեւ 53-ամյա տղամարդը, ներքուստ չհաշտվելով տեղի ունեցածի հետ, վերցնելով իր անվամբ պարգեւատրում ստացած՝ փամփուշտներով լիցքավորված «CZ 75 SP 01 Tactical» տեսակի ատրճանակը, իր անձնական օգտագործման ավտոմեքենայով միայնակ վերադարձել է Արամուս բնակավայրում գտնվող «Էրիկի մոտ» կոչվող հացատան տարածք՝ պարզաբանումներ ստանալու համար:

Հացատան բակում վերջինիս կրկին շուրջ 10 րոպե ծեծկռտուքի մեջ է մտել նույն անձի եւ վերջինիս միացած եւս 2 անձի հետ, որի ընթացքում նրանք ձեռքերով ու ոտքերով բազմաթիվ փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց, տվել են հայհոյանքներ, հնչեցրել անպարկեշտ արտահայտություններ՝ միմյանց պատճառելով մարմնական վնասվածքներ:

Վիճաբանության ընթացքում 53-ամյա անձը գործադրել է իր կրած ատրճանակը՝ մեկ անգամ օդ է կրակել: Իսկ երբ ներկաները ցանկացել են խափանել նրա գործողությունները եւ ձեռքից վերցնել ատրճանակը, կատարել է եւս մեկ կրակոց, ինչի հետեւանքով անզգուշությամբ աջ դաստակի շրջանում հրազենային վիրավորում է ստացել հացատան մեկ այլ առանձնասրահից դուրս եկած հաճախորդներից մեկը, ում առողջությանը պատճառվել է թեթեւ վնաս:

Նշված անձանց մասնակցությամբ կատարված խուլիգանության հետեւանքով կրկին խաթարվել է հացատան բնականոն իրավիճակը՝ հաճախորդների ու աշխատակիցների մոտ առաջացնելով տագնապի, վախի զգացում: Ի վերջո, վիճաբանությունը դադարել է ներկաների ահազանգով ոստիկանության աշխատակիցների՝ դեպքի վայր ժամանելուց հետո:

2024թ. հունվարի 12-ին վերոնշյալ 4 անձինք ձերբակալվել են»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Ըստ աղբյուրի՝ հունվարի 13-ին Երեւան քաղաքի նշված բնակչին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով (զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով կատարված խուլիգանությունը) նախատեսված հանցավոր արարք կատարելու համար: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը:

Նշվում է, որ մյուս երեք անձանցից մեկին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով եւ 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (խուլիգանությունը՝ կատարված մի խումբ անձանց կողմից, եւ մի խումբ անձանց կողմից ֆիզիկական ներգործությունը), երկուսին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (խուլիգանությունը՝ կատարված մի խումբ անձանց կողմից): Նրանցից մեկի նկատմամբ եւս որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը՝ նշված 4 անձանց վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկողություն իրականացնող դատախազի հաստատմանը:

ՔՆՀՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՅԹՅՈՒՆԻ ԴԵՊՔՈՎ

Երեւան քաղաքի Նոր Արեւ թաղամասի 34-րդ փողոցում տեղի ունեցած պայթյունի դեպքի առթիվ, որի հետեւանքով ամբողջությամբ կամ մասնակի փլուզվել եւ վնասվել են մի քանի բնակելի տներ, ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 357-րդ հոդվածի 2-րդ մասի (Հրդեհային անվտանգության կանոնները կամ պահանջները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետեւանք):

Ձեւավորվել է քննչական խումբ: Որոնողական եւ փրկարարական աշխատանքներին զուգահեռ՝ քննչական վերոնշյալ բաժնի քննիչների կողմից դեպքի վայրում իրականացվել են անհրաժեշտ եւ անհետաձգելի գործողություններ:

Տեղի ունեցած պայթյունի եւ փլուզման պատճառները, ինչպես նաեւ դեպքի մնացած հանգամանքները կպարզվեն սկսված նախաքննությամբ, որի արդյունքների վերաբերյալ ՀՀ քննչական կոմտիեն պարբերաբար տեղեկատվություն կտրամադրի:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՊՂԾԵԼ Է ՌՈՒՍԱԿԱՆ ԴՐՈՇԸ

Armlur.am-ին հայտնի դարձավ, որ ՌԴ դրոշի ատրիբուտները պղծող Սամվել Շիրինյանի նկատմամբ դատարանը խափանման միջոց է ընտրել երկրից չբացակայելու արգելքը:

Հիշեցնենք՝ ArmLur.am-ի հարցմանը ի պատասխան՝ ՀՀ քննչական կոմիտեից հայտնեցին, որ հայտնաբերված եւ Կոմիտե ներկայացված Երեւան քաղաքի բնակչին ներկայացվել է մեղադրանք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (Ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաեւ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը՝ հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունների, զանգվածային լրատվության միջոցների կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ):

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Նիկոլ Փաշինյանի իշխանության ամենատարբեր ներկայացուցիչներ հակառուսականության այնպիսի ալիք են առաջացրել, որ քաղաքացիներից մեկը նախօրեին պղծել է ռուսական դրոշը:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, թե ինչ է իրավապահներին հայտնել ՌԴ դրոշի ատրիբուտները պղծող Սամվել Շիրինյանը: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝երբ իրավապահները նրան հարց են տվել, թե ինչու է նման քայլի գնացել ու խուլիգանություն կատարել, 46-ամյա Շիրինյանն ասել է, թե ռուսները մեր նկատմամբ վատ բաներ արեցին. եթե չկա Արցախի հայերի ցեղասպանության ճանաչում, չկան նաեւ Լենինգրադում տուժածներ: Ամեն դեպքում, կատարողը ձերբակալված է:

Ինչպես հայտնի է, Հայաստանում Ռուսական տան ղեկավար Վադիմ Ֆեֆիլովը դիմել է ՀՀ գլխավոր դատախազին՝ Երեւանում Լենինգրադի պաշարման ժամանակ զոհված երեխաների հիշատակին նվիրված հուշակոթողի նկատմամբ անհարգալից միջադեպի գործով:

«Ազգամիջյան ատելություն հրահրելը եւ բռնության կոչերը՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի դեպքերի հիման վրա, անընդունելի են: Տեղի ունեցածի մեղավորները պետք է պատասխանատվության ենթարկվեն: Պարզվել էր, որ հունվարի 27-ին քաղաքացի Սամվել Շիրինյանը ցուցադրաբար պոկել եւ տրորել է Ռուսաստանի Դաշնության դրոշը խորհրդանշող ժապավենները, տապալել է ծաղկեպսակները՝ այդ ամենն ուղեկցելով Ռուսաստանի հասցեին վիրավորական մեկնաբանություններով եւ տեղադրելով Tik Tok սոցիալական ցանցում»,- գրել է նա:

ArmLur.am-ը գրել էր, որ մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Սամվել Շիրինյանը հայտնաբերվել էր Բագրատաշենի անցակետից: Նա ցանկացել էր հատել ՀՀ սահմանը, սակայն իրավապահները կարողացել են կանխել նրա փախուստը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝փետրվարի 2-ից 5-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 149 դեպք, որից 8-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԻ ՀՆԳԱՄՅԱԿ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Է

Անուշավան Մակարյանը 2019 թվականից ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատարն է: Նախկինում նրան հարցադրում ենք արել, թե ինչու մասնաճյուղի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ չի կայանում: Նա ասել է, որ այդ հարցը պետք է ուղղել ԵՊՀ ռեկտորին, ում իրավասության ներքո է գտնվում այդ խնդիրը:

«ԱՆՀԱՅՏ» ՕԳՆԱԿԱՆՆԵՐԸ

Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը հունվարի 30-ին որոշում է ընդունել 2024 թվականի փետրվարի 1-ից Աշխեն Ամիրխանյանին նշանակել Դիլիջան համայնքի ղեկավարի օգնական: Աշխեն Ամիրխանյանի վերաբերյալ Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում տվյալներ չկան: Համայնքապետարանի կայքում տվյալներ չկան նաեւ Դիլիջան համայնքի ղեկավարի մյուս օգնականի՝ Ադամ Սարգսյանի մասին: Վերջինս լուսանկարը տեղադրված չէ համայնքապետարանի կայքում, թեեւ այդ կայքում տեղադրված են Դիլիջանի համայնքապետարանի հավաքարարների լուսանկարները:

ՀՈՂԵՐԸ ՉԵՆ ՄՇԱԿՎՈՒՄ

Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշոր համայնքում շուրջ երեք տասնամյակ գյուղատնտեսության նշանակության հողերի մի մասը հայ-ադրբեջանական սահմանին մոտ լինելու, հակառակորդի նշանառության թիրախում գտնվելու, ականապատ լինելու պատճառով չի մշակվում: Նոյեմբերյանի համայնքապետարանը սահմանամերձ 8 բնակավայրի սահմամանագոտում գտնվող հողի եւ այլ անշարժ գույքի հարկ չի հավաքագրում: Կառավարության 2014թ. դեկտեմբերի 18-ի 1444-Ն որոշումով վերոհիշյալ բնակավայրերի բնակիչներին պատկանող բնակելի կառուցապատման հողամասերի, վարելահողերի, բազմամյա խաղողի տնկարքների եւ այլ հողերի, նաեւ անշարժ գույքի՝ բնակարանների, ավտոտնակների, այգետնակների եւ այլնի հարկերը պետական բյուջեից փոխհատուցվում են: 2023 թվականին ՀՀ պետական բյուջեից Նոյեմբերյան համայնքի բյուջե է փոխացվել 20 միլիոն 227 հազար դրամ: 2023 թվականի համար այդ չմշակվող հողերի համար հաշվարկված հարկը Նոյեմբերյան քաղաքում կազմում է 4 միլիոն 708 հազար 892 դրամ, Բարեկամավան գյուղում՝ 120 հազար 660 դրամ, Բերդավանում՝ 5 միլիոն 248 հազար 941 դրամ, Բաղանիսում՝ 486 հազար 592 դրամ, Դովեղում՝ 1 միլիոն 61 հազար 705 դրամ, Կողբում՝ իրավաբանական անձանց համար՝ 50 հազար 649 դրամ, ֆիզիկական անձանց համար՝ 4 միլիոն 681 հազար 306 դրամ, Կոթիում՝ 2 միլիոն 662 հազար 105 դրամ, Ոսկեվանում՝ 1 միլիոն 206 հազար 199 դրամ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ

ԶՈՒԳԸՆԿԵՐՈՋ ԿԱՄ ԱՄՈՒՍՆՈՒ ՀՈՐԴՈՐՈՎ

Առողջապահական գերատեսչության Կախվածությունների բուժման ազգային կենտրոնի տնօրեն Սուրեն Նազինյանն արդյունավետ է համարում իրավապահ համակարգի եւ դատախազական մարմինների, մասնավորապես՝ Պետական եկամուտների կոմիտեի համատեղ ջանքերը Հայաստանում թմրամիջոցների դեմ պայքարի գործում:

Ըստ նրա՝ Կենտրոն դիմող եւ բուժում ստացող անձանց թիվը հետզհետե աճում է, որը իրականացվող գործողությունների արդյունքն է:

Այժմ Կենտրոնում բուժում ստացողների թիվը մասնագետը դժվարանում է հստակ հայտնել, սակայն նկատում է՝ միայն 2023 թվականին թմրամիջոցների եւ հոգեներգործուն նյութերի գործածմամբ պայմանավորված՝ կախվածության դեմ բուժում է ստացել 7854 անձ, որից 200-ը՝ կանայք: Ըստ նրա՝ բուժվողների թվում երիտասարդները նույնպես մեծ թիվ են կազմում:

«Մեր Կենտրոն դիմել են նաեւ անչափահասներ, իհարկե՝ ընտանիքի անդամների ուղեկցությամբ: Այս պարագայում պետք է նկատենք, որ երիտասարդները թմրամիջոցները հեշտ ձեռք են բերում համացանցից, այլ ոչ թե մեծահասակների պարագայում, երբ դրանք փոխանցվում են հին մեթոդով՝ անձը անձին է տալիս: Մեր շրջապատում մեծահասակները այդքան էլ սմարթֆոններին լավ չեն տիրապետում, երիտասարդները գտնում են այդ սոցիարթակներն ու գնում դրանք»,- ասում է նա:

Հենց սա է պատճառը, որ այժմ, թմրամիջոցների օգտագործմամբ պայմանավորված, առաջատար են նաեւ կանայք ու աղջիկները. Կախվածության կենտրոնում առաջին անգամ բուժում է ստացել 16 տարեկան երկու անչափահաս աղջիկ:

Խոսելով օգտագործման պատճառների մասին՝նա նկատում է՝դրանք տարբեր են, հիմնականում անձը այդ քայլին գնում է մեկ ուրիշի խորհրդով՝ որպես պատճառ նշելով, թե տրամադրություն է բարձրացնում: Աղջիկներն էլ գնում են այդ քայլին իրենց զուգընկերոջ կամ ամուսնու հորդորով:

Կենտրոնի տնօրենը մանրամասնում է՝ լինում են դեպքեր, երբ դեռահաս տարիքից սկսում են մարիխուանայից, հետո անցնում ավելի վտանգավոր սինթետիկ հոգեխթանիչների: Հայաստանում առկա նոր տեսակի թմրամիջոցների դեպքում մարդու մոտ կախվածությունն առաջանում է բավականին արագ: Երբեմն նաեւ մեկ անգամ օգտագործումը կարող է հանգեցնել արտահայտված հիվանդագին ցանկության, սակայն եթե անձը վաղ հասկանա իր խնդիրն ու դիմի համապատասխան բուժման, նույնքան արագ էլ կազատվի այդ կախվածությունից:

Ջրուցակիցն ասում է՝ եթե մեր երկրում ավանդաբար տարածված էին երկու խմբի՝ կաննաբինոիդային (ամենահայտնի ներկայացուցիչն է մարիխուանան) եւ օփիոիդային (ամենահայտնի ներկայացուցիչն է հերոինը) խմբերի թմրամիջոցները, ապա ներկայումս մեծ տարածում են գտել նաեւ մեթամֆետամինը եւ հոգեխթանիչ ազդեցությամբ այլ խիստ վտանգավոր թմրամիջոցներ, որոնք առավելապես պահանջարկ ունեն գիշերային ակտիվ ժամանցի սիրահար երիտասարդների շրջանում:

Հաստատության ղեկավարը ընդգծում է՝ նման թմրամիջոցներից հատկապես մեթամֆետամինը, որն ավելի հայտնի է ոչ գրական «կրիստալ» անվանումով եւ վաճառվում է տելեգրամյան ալիքներով, առաջին իսկ օգտագործումից է ախտահարում մարդու կենտրոնական նյարդային համակարգը՝ առաջացնելով հիվանդագին հակում թմրամիջոցի նկատմամբ, արագորեն ձեւավորելով ծանր կախվածության համախտանիշ:

«Նոր հոգեխթանիչների գործածումը բերում է լրջագույն հոգեաշխատաբանական դեպքերի: Դրա արդյունքում անձի մոտ առաջանում են ոչ միայն վարքագծային, այլ նաեւ հոգեբանական առողջության խնդիրներ: Շատ տարածված են դեպրեսիան, զառանցանքները, հարուցինացիաները, ընկալման խանգարումները: Այդ պատճառով հաճախ նման անձինք բուժում են ստանում Հոգեկան առողջության կենտրոններում: Մենք տրամադրում ենք նաեւ մեր մասնագետի օգնությունը»,- նշում է նա:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՊԱՅԹՅՈՒՆ

ԿԱՆ ՋՈՀԵՐ ԵՎ ՎԻՐԱՎՈՐՆԵՐ

Երեւանի Նոր Արեշի 34-րդ փողոցում փետրվարի 5-ի կեսօրին մոտ տեղի ունեցած պայթյունի եւ փլուզման հետեւանքով զոհվել է 2, վիրավորվել՝ նույնքան մարդ: ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության տնօրենի կարգադրությամբ բոլոր ուժերը վերադարձել են տեղակայման վայրեր: Այս մասին տեղեկացրին ՀՀ ներքին գործերի նախարարությունից:

«Փետրվարի 5-ին՝ ժամը 11.36-ից սկսած, 911 ահազանգման կենտրոնում ստացվել են ահազանգեր՝ Երեւանի Նոր Արեշի 34-րդ փողոցում տեղի ունեցած պայթյունի եւ փլուզման վերաբերյալ: Դեպքի վայր են մեկնել Երեւան քաղաքի փրկարարական վարչության երեք մարտական հաշվարկ, հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի փրկարարական չորս ջոկատ (այդ թվում՝ կինոլոգ), կառուցվածքային եւ տարածքային ստորաբաժանումների հերթապահ եւ օպերատիվ խմբերը, Հայկական կարմիր խաչի կամավորներ ու Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի ավտոկռունկը:

Պայթյունի հետեւանքով տեղի է ունեցել փլուզում, վնասվել են տներ: Որոնողափրկարարական աշխատանքներին մասնակցել է 180 փրկարարական ծառայող, նաեւ Հայկական կարմիր խաչի 15 կամավոր: Փլատակներից դուրս են բերվել եւ բուժօգնության տեղափոխվել վնասվածքներով երկու քաղաքացիներ՝ 1994 թ. ծնված Հրանտ Սարգսյանը եւ 1938 թ. ծնված Ռոզա Նազարյանը: Որոնողափրկարարական աշխատանքները շարունակվել են, եւ ժամը 16:05-ին փլատակներից դուրս են բերվել Գայանե Եղոյանի ու Հայկ Սողոմոնյանի դիերը:

Պայթյունի հետեւանքով ամբողջությամբ փլուզվել են Նոր Արեշի 34-րդ փողոցի թիվ 43 եւ թիվ 27ա տները, եւս մի քանի տան կառուցատարրեր վնասվել են»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Ըստ աղբյուրի՝ դեպքի վայրում Փրկարար ծառայության եւ Հայկական կարմիր խաչի հոգեբանները մահացածների հարազատներին ցույց են տվել հոգեբանական աջակցություն: Տեղում հերթապահել է շտապօգնության երկու բրիգադ, պարեկային ծառայողները սահմանազատել են տարածքը, հսկողության են վերցրել դեպքի վայր տանող ճանապարհները:

Նշվում է, որ ժամը 16.05-ին, Փրկարար ծառայության տնօրենի կարգադրությամբ, բոլոր ուժերը վերադարձել են տեղակայման վայրեր: Դեպքի վայրում երկու մարտական հաշվարկ իրականացնում է հերթապահություն:

Նախաձեռնվել է քրեական վարույթ: Պայթյունի պատճառն ու այլ հանգամանքներ պարզվում են:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 28 պատահար. 38 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (1)

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից, ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի՝ «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Պտղնի գյուղի վարչական տարածքում արդյունաբերական նպատակով Քանաքեռ ՀԷԿ-ի դերիվացիոն ջրանցքից 9.336 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-ից - 18-ը դիմել Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի փետրվարի 12-ին՝

Ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

ՀԱՄԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (2)

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից, ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է «Հոստուն» ՍՊԸ-ի՝ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական տարածքում «Սելիմե» փիէկ-ի կառուցման նպատակով Սալի գետից 790.0 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-ից - 18-ը դիմել Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի փետրվարի 12-ին՝

Ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

ԴԻՏԱՐԿՈՒՄ

ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՊԱԿԱՍ

Մեդիափորձագետ Արթուր Պապյանի խոսքով՝ չկա մի գործիք, որով մարդն իրեն վիրտուալ տարածքում պաշտպանված կզգա, որովհետեւ հենց ինչ-որ մի գործիք է ստեղծվում, որն ինչ-որ բանից պաշտպանում է, կիբերհանցագործներն անմիջապես ներմուծում են դա շրջանցելու մեխանիզմները:

Այս մասին նա ասում՝ անդրադառնալով սոցիալական տարբեր հարթակներով, մասնավորապես՝ տելեգրամյան ալիքներով իրականացվող ամենատարբեր խարդախություններին ու հանցագործություններին:

«Կիբերտիրույթում պաշտպանությունը առաջին հերթին ենթադրում է մեդիագրագիտություն. ինչի՞ մասին է խոսքը. մեդիագրագետ մարդը, երբ ինչ-որ ինֆորմացիա է տեսնում, փորձում է այն ճշտել սկզբնաղբյուրից կամ գտնել եւս մեկ, երկու անկախ աղբյուր, որտեղ դա կա: Ավելի պատկերավոր ասած՝ ենթադրենք՝ տեսնում եք, որ տարածվում է հայտարարություն այն մասին, որ ինչ-որ մի հայաստանյան սուպերմարկետ խաղարկություն է կազմակերպում, որին առաջարկում է միանալ եւ գրանցվել «Ֆեյսբուք»-ի միջոցով: Մեդիագրագետ մարդն ասում է՝ լավ, գնամ էս սուպերմարկետի կայքէջ, տեսնեմ՝ այնտեղ կա նման ինֆորմացիա, կամ երեկոյան այցելեմ սուպերմարկետ, հարցնեմ՝ դուք այսպիսի խաղարկություն ունե՞ք, ոչ թե ինչ-որ մի բան տեսավ, անմիջապես հղումի վրա սեղմի, մտնի, քարտային տվյալները տա ու հետո գլխին տա՝ խաբեության զոհ դառնա: Այս նույն սկզբունքները գործում են նաեւ ինֆորմացիայի դաշտում: Առհասարակ, երբ ինչ-որ ինֆորմացիա եք տեսնում, անհրաժեշտ է գոնե մեկ, երկու աղբյուրից ստուգել, շատ պարզ կանոն է, որը կարող է շատ-շատ գլխացավանքներից փրկել»,- հորդորում է Պապյանը:

Ըստ մեդիափորձագետի՝ հատկապես պետք է ստուգել բոլոր այն հաղորդագրություններն ու գրառումները, որոնք օգտատիրոջ մոտ էմոցիաներ են առաջացնում. «Այսինքն, երբ ասվում է՝ «հենց հիմա՛», «շտապե՛ք», «20 րոպեի ընթացքում արեք» կամ «24 ժամում գրանցվե՛ք, այլապես զեղչը կվերջանա, եւ ձեր շահումը տեղի չի ունենա»: Երբ նման բովանդակությամբ նամակ եք ստանում, կասկածն առաջին բանը պետք է լինի, հատկապես երբ էմոցիոնալ ֆոն կա, կամ ձեզ շտապեցնում կամ ճնշում են: Երկրորդ՝ պետք է փորձել ինֆորմացիան տարբեր աղբյուրներից ստուգել, ոչ թե միանգամից գնալ այդ հղումով»:

Խոսելով տելեգրամյան տարբեր ալիքներով իրականացվող խարդախությունների ու հանցագործությունների մասին, որոնց նպատակը գումար շորթելն է՝ Արթուր Պապյանն ընդգծում է, որ այդ դեպքում (մանավանդ անչափահասների պարագայում) կարեւոր է, որ ծնողները եւ առհասարակ մարդիկ նախապատրաստված լինեն:

«Քանի որ հիմա արհեստական բանականության տեխնոլոգիաներն են աճում, եւ գնալով դա հեշտանում է, այսինքն՝ մարդու պատկերով տարբեր կոնտենտ ստեղծելը, նույն մերկացած մարմնի վրա գլուխ մոնտաժելը գնալով կատարելագործվում է, եւ հետեւաբար կանխատեսվում է, որ նման տիպի հարձակումների ծավալը մի քանի անգամ երկրաչափորեն աճելու է: Պետք է նախեւառաջ տեղյակ լինել, որ սա հնարավոր սցենար է, եւ երկրորդ՝ ազնիվ խոսել. Հայաստանում մենք այդպիսի փորձ ունեցանք, երբ մի հայտնի մշակույթի գործչի այդպիսի շանտաժ էին արել, եւ ինքը որոշել էր հակաքայլ անել. «Ֆեյսբուք»-ում հրապարակել էր այդ լուսանկարներն ու գրառում արել, որ դրանք մոնտաժված նկարներ են, եւ որ իրեն շանտաժի են ենթարկում: Դա շատ հետաքրքիր մարտավարություն է, այսինքն՝ գործել հակաքայլի սկզբունքով եւ առանձնապես նման բաներից չվախենալ»,- ասում է մեդիափորձագետը:

Նրա կարծիքով՝ երեխաների դեպքում կարեւոր է, որ ծնողները երեխայի հետ բաց կոմունիկացիա ունենան եւ ասեն, որ նման բաներ կան, եւ որ նման հարձակումների զոհ դառնալու դեպքում դիմեն իրենց, այլ ոչ թե ծուղակն ընկնեն:

«Տեղեկացվածության պակասի պատճառով տուժողները հաճախ ամաչում են ու չեն դիմում իրավապահ համակարգին, եւ այդ դեպքում գործ էլ չկա, որպեսզի քննություն իրականացվի,եւ այդ շորթումները բացահայտվեն: Գումար փոխանցելը միանշանակ լուծում չէ. դա պիտի լինի վերջին բանը, որ կարող եք անել, այն էլ՝ մասնագետի հետ խորհրդակցելու արդյունքում ու նրա ցուցումով: Գումար փոխանցելով՝ դուք խրախուսում եք հանցագործներին շարունակել իրենց սեւ գործը, ավելին՝ ոչ մի երաշխիք չկա, որ գումարը փոխանցելուց հետո կբավարարվեն ու հաջորդ անգամ ավելի մեծ գումար չեն պահանջի»,- զգուշացնում է մասնագետը:

Մեդիափորձագետը ուրախությամբ ընդգծում է, որ այդպիսի լուրջ դեպքերի համար ունենք առցանց հանցագործություններով զբաղվող բավական կոմպետենտ ինտերնետային քննչական բաժին. «Վերջին շրջանում տելեգրամյան ավելի քան 50 ալիքներով թմրանյութերի վաճառք են բացահայտել, շանտաժի դեպքեր, այնպես որ տեղին է նման դեպքերում դիմել այն կառույցներին, որոնք մասնագիտացած են, հայտ ներկայացնել եւ տեսնել, թե ինչպես կուղղորդեն, կօգնեն»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՐՄԻՐ ԽԱՉ

ԱՅՑԵԼԵԼ Է ԳԵՐԻՆԵՐԻՆ

ի միջազգային կոմիտեն օրերս այցելել է Բաքվում կալանավորված Արցախի նախկին ղեկավարներին եւ մնացած գերիներին:

ԿԽՄԿ պատվիրակության հաղորդակցման ղեկավար Զառա Ամատունու հաղորդմամբ՝ նրանց հնարավորություն է տրվել կապ հաստատել իրենց ընտանիքների հետ: Բաքվում պահվող հայ գերիներին այցելությունները տեղի են ունեցել հունվարի վերջին, փետրվարի սկզբին:

Հիշեցնենք, որ ԿԽՄԿ ներկայացուցիչները սեպտեմբերի 19-ի ռազմական գործողություններից հետո Ադրբեջանի իշխանությունների կողմից ձերբակալված հայերի մի մասին առաջին անգամ տեսակցել էին 2023 թվականին նոյեմբերի սկզբին:

Հիշեցնենք՝ ադրբեջանցի սահմանապահները սեպտեմբերի վերջին ձերբակալել են Արցախի նախկին պետնախարար, բարերար Ռուբեն Վարդանյանին, ՊԲ նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանին, ՊԲ հրամանատարի նախկին տեղակալ Դավիթ Մանուկյանին, Արցախի նախկին արտգործնախարար Դավիթ Բաբայանին, ԼՂ ԱԺ նախագահ Դավիթ Իշխանյանին, Արցախի նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանին, Բակո Սահակյանին, Արայիկ Հարությունյանին: Վերջինին, ի դեպ, Բաքվում ցմահ ազատազրկում է սպառնում:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹՆ ՈՒ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆ ԵՆ ՀԵՆՔԸ

Կոմպոզիտոր, ՀՀ ժողովրդական արտիստ Տիգրան Մանսուրյանի 85-ամյակին նվիրված համերգը հանդիսատեսի լայն շրջանակին հնարավորություն տվեց ունկնդրելու հեղինակի «Զուգահեռ երգեր», «Քավարան», «Տարվա եղանակներ» ստեղծագործություններ-ը, որոնք բազմիցս հնչել են ոչ միայն Հայաստանում, այլեւ միջազգային հարթակներում:

Համերգային երեկոն, որը «Կողբ» հիմնադրամը նախաձեռնել էր Մանսուրյանի անվան միջազգային կոմպոզիտորական մրցույթի շրջանակներում, տեղի ունեցավ փետրվարի 4-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը:

Երեկոյին կոմպոզիտորի ակադեմիական գործերը կատարեցին Հայաստանի պետական կամերային երգչախումբը, Հայաստանի պետական կամերային նվագախումբը, Տիրամայր Հայաստանի երգչախումբն ու սիրված մենակատարներ: Համերգը ղեկավարեց դիրիժոր, Հայաստանի ժողովրդական արտիստ Ռոբերտ Մլքեյանը:

«Կողբ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արման Բարսեղյանը շնորհավորեց մաեստրոյին եւ երկար, բեղուն գործունեություն մաղթեց:

«Երբ սկսեցինք Մանսուրյանի անվան միջազգային մրցույթը, մեզ հաճախ էին հարցնում, թե ինչու տարբեր նախաձեռնությունների շարքում նախընտրեցինք եւ առաջնություն տվեցինք մրցույթին, միջոցառումների շարքին: Նման հարցը վկայում է, որ մշակույթը մեր իրականությունում պատշաճ արժեւորված չէ, այնինչ հենց մշակույթն ու մեր ինքնությունն են այն հենքը, որի հիման վրա պետք է շարունակենք ամրապնդել ու զարգացնել մեր պետությունն ու պետականությունը»,-ասաց Բարսեղյանը:

Նա հիշեց Կոստան Զարյանի խոսքերն այն մասին, որ հայերը երկու հսկա աշխարհների՝ մշակութային արեւելքի եւ քաղաքակիրթ արեւմուտքի միջեւ ինչպես են կարողանալու իրականացնել իրենց պատմական առաքելությունը:

«Կարծում ենք՝ ոչ թե պետք է հակադրել արեւելքն ու արեւմուտքը, մշակույթը կամ քաղաքակրթությունը, այլ ճիշտ հակառակը. մենք պետք է փորձենք համադրել դրանք, ինչն արել է Կոմիտասը, որի երաժշտությունը լսելիս դժվարանում ես ասել՝ այն արեւմտյան է, թե արեւելյան»,-ընդգծեց Արման Բարսեղյանն ու խոստովանեց՝ նույն հարցն իր մոտ է ծագել, երբ ունկնդրել է Տիգրան Մանսուրյանի «Ռեքվիեմ»-ը:

Ըստ Բարսեղյանի՝ Մանսուրյանը Կոմիտասի գործի արժանի շարունակողն է, եւ խոսքը ոչ թե փակ եւ մեր մեջ պարփակված մշակույթի մասին է, այլ աշխարհին բաց եւ աշխարհի արժանիների հետ մրցակցող մշակույթի մասին:

Տիգրան Մանսուրյանը, որն ուշադրությամբ էր հետեւում Բարսեղյանի խոսքին, բեմ բարձրացավ բուռն ծափահարությունների ներքո եւ ասաց՝ խորապես զգացված է ջերմ ընդունելության, իր երաժշտությանը նվիրված համերգին ներկայության համար: «Շնորհակալություն եմ հայտնում «Կողբ» հիմնադրամին, որ արեց ամեն բան, որ թե՛ երաժիշտները, թե՛ համերգասրահը աշխատեն ի նպաստ այս երեկոյի: Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում բեմում հանդես եկող երաժիշտներին, որոնց ղեկավարում է իմ շատ լավ բարեկամ, դիրիժոր Ռոբերտ Մլքեյանը»,-նշեց մաեստրոն եւ շնորհակալություն հայտնեց մենակատարներին՝ բարիտոն Գուրգեն Բավեյանին, որ Գերմանիայից հատուկ ժամանել էր համերգին մասնակցելու համար, երգչուհի Տաթեւիկ Մովսեսյանին, որ բազմիցս կատարել է Մանսուրյանի գործերը, դաշնակահար Արթուր Ավանեսովին եւ դերասան Տիգրան Գաբոյանին, որ ներկայացրեց այն պոեզիան, որի հիման վրա Մանսուրյանը երաժշտություն է գրել:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«Newmag»

ԳՐՔԻ ՁՄԵՌԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

Երեւանում փետրվարի 10-ին կանցկացվի գրքի ձմեռային փառատոնը, որն արդեն 3-րդ անգամ կազմակերպում է «Newmag» հրատարակչությունը: «Newmag» հրատարակչության փառատոնների ծրագրի ղեկավար Անի Հակոբյանը նշեց, որ այս տարի միայն գրականության ոլորտից ընդգրկում են արվեստի այլ ճյուղեր՝ թատրոն, երաժշտություն, նկարչություն:

«Ներկայացվելու է հայ հեղինակների 4 գիրք: Մասնավորապես՝ Անի Քոչարի «Կյանքը երկրորդ փորձից»-ը, Թովմաս Առաքելյանի «Ճանապարհ»-ը, Գոռ Կարապետյանի «Proակտիվ առաջնորդը» գիրքը, ինչպես նաեւ Աստղիկ Սահակյանի «Նախագծերի կառավարում»-ը: Դյութ ամսագիրն ենք ներկայացնելու: Ասեմ, որ այդ օրը բոլոր նոր գրքերը վաճառվելու են 30 տոկոս զեղչով, իսկ «Newmag»-ի նախորդ գրքերը վաճառվելու են 40 տոկոս զեղչով»,-ասաց Անի Հակոբյանը:

«Newmag» հրատարակչության գլխավոր խմբագիր Գնել Նալբանդյանը տեղեկացրեց, որ այդ օրը հարուստ ծրագիր է սպասվում: Փառատոնի բացումը կատարելու է Արցախի պետական ջազ նվագախումբը: Բեմում կլինի Տավուշի թեմի «ՏարԼույս» երգչախումբը: Սպասվում է նկարիչ Տիգրան Ձիթողցյանի եւ դիզայներ, ոսկերիչ քանդակագործ Նուռի աշխատանքների ցուցադրությունը: Ներսես Ավետիսյանը բեմում կլինի «Ցուրտ օր դժոխքում» մոնոդրամայով: Կլինեն պանելային քննարկումներ «Արհեստական բանականությունը՝ ընդդեմ ստեղծագործողների» թեմայով: Վերջում սպասվում է մեծ համերգ: Ավետ Բարսեղյանի ստեղծագործությունները կհնչեցնեն Արամ MP3-ը, Սոնա Ռուբենյանը, Գոռ Սուջյանը Մովսես Մովսիսյանը: Մուտքն ազատ է, ամրագրումների կարիք չկա: Փառատոնի օրը կտրվի արցախցի գրողների ստեղծագործությունների մրցույթի մեկնարկը:

«Այս միջոցառման ընթացքում ստացված հասույթը կփոխանցվի բարեգործական նպատակին: Կստեղծվի հանձնաժողով, որը հասույթը կտրամադրի այն ստեղծագործողներին, որոնք տեղահանվել են Ադրբեջանի ագրեսիայի պատճառով, բնակվում են Հայաստանում, ցանկանում են շարունակել իրենց ստեղծագործական կյանքը»,-ասաց Գնել Նալբանդյանը:

Հրատարակչության ստրատեգիական եւ հատուկ նախագծերի ղեկավար Գոհար Մանուկյանը, խոսելով ձմեռային փառատոնի կարեւորության մասին, նշեց, որ ընթերցողների հետաքրքրությունը բավական մեծ է:

«Մենք ունենք մեր կայուն ընթերցողներին, սակայն չենք սահմանափակվում եւ ցանկանում ենք ընդլայնել նրանց շրջանակը՝ ներգրավելով երիտասարդներին: Ձմեռային փառատոնն այս անգամ տարբերվում է իր միջոցառումների բազմազանությամբ: Այսինքն՝ յուրաքանչյուրի ճաշակին հարմար միջոցառումներ ունենք: Մեր վիճակագրությունը ցույց է տալիս, որ տարեցտարի գրքի փառատոնների նկատմամբ հետաքրքրությունն աճում է»,-ասաց Գոհար Մանուկյանը:

Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿՄԱՍՆԱԿՑԻ 8 ՄԱՐԶԻԿՈՎ

Հայաստանի հրաձգության հավաքականը Եվրոպայի առաջնությանը կմասնակցի 8 մարզիկով:

Այս մասին հայտնում է հրաձգության ֆեդերացիան: Հայաստանի հրաձգության հավաքականը փետրվարի 10-24-ը՝ Եվրոպայի առաջնությանն ընդառաջ, ուսումնամարզական հավաք կանցկացնի Լեհաստանի Վրոցլավ քաղաքում:

Եվրոպայի առաջնությանը կմասնակցեն Հրաչ Բաբայանը, Էլմիրա Կարապետյանը, Բենիկ Խլղաթյանը, Գեւորգ Մելքոնյանը, Նարե Գաբրիելյանը, Էդիտա Մանուչարյանը, Գոռ Մանուչարյանը, Գրիգոր Պողոսյանը:

Եվրոպայի առաջնությունը վարկանիշային է Փարիզի 33-րդ ամառային օլիմպիական խաղերի համար: Եվրոպայի առաջնությունը կկայանա փետրվարի 24-ից մարտի 3-ը:

ՀԱՂԹԵԼ 4:1 ՀԱՇՎՈՎ

Հայաստանի բռնցքամարտի հավաքականը 4 մարզիկով Բուլղարիայում մասնակցում է Ստրանջայի հեղինակավոր մրցաշարին:

Մրցումների առաջին օրը ռինգ է դուրս եկել Հայաստանի չեմպիոն, 60 կգ քաշային Արթուր Սահակյանը: Մեր մարզիկը մրցել է Ուկրաինան ներկայացնող Տիմուր Բաբաշկոյի հետ ու հաղթել 4:1 հաշվով:

Հայաստանի հավաքականի կազմում ընդգրկված են նաեւ Արեն Ասլամազյանը (51 կգ), Դավիթ Եգորյանը (54 կգ) եւ Աղվան Ալեքսանյանը (80 կգ):

Հայ բռնցքամարտիկները Ստրանջայի մրցաշարին մասնակցում են Արթուր Մելքումյանի գլխավորությամբ:

ՈՒՍՈՒՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՎԱՔ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի մրցավարները փետրվարի 5-15-ը ուսումնամարզական հավաք կանցկացնեն Կիպրոսի Այիա Նապա քաղաքում:

Այս մասին հայտնում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան:

Հավաքի ղեկավարը ՀՖՖ մրցավարական կոմիտեի նախագահ Սլավիկ Ղազարյանն է: Հավաքին կմասնակցի 32 մրցավար, որոնք սպասարկում են Պրեմիեր լիգայի եւ Հայաստանի Առաջին խմբի առաջնության հանդիպումները:

Ուսումնական հատվածի հրահանգիչները կլինեն Կարեն Նալբանդյանը, Աշոտ Հարությունյանը եւ Քնարիկ Գրիգորյանը: Ֆիզպատրաստության մարզումները կանցկացնի Արման Ալաբերքյանը: Հավաքի ընթացքում կլինեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական պարապմունքներ, իսկ հավաքի ավարտին մասնակից մրցավարները կհանձնեն տեսական եւ ֆիզպատրաստության քննություններ:

Փետրվարի 7-ից 9-ը Կամո Մահտեսյանի գլխավորությամբ եւս մեկ սեմինար-հավաք կանցկացվի ՀՖՖ Տեխնիկական կենտրոն/ֆուտբոլի ակադեմիայում: Հավաքին կմասնակցեն բոլոր այն մրցավարները, որոնք չեն ընդգրկվել Կիպրոս մեկնող մրցավարների ցանկում: Այս սեմինար-հավաքը եւս բաղկացած կլինի թե՛ տեսական, թե՛ գործնական հատվածներից:

● *Փետրվարի 7-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա ««Անտիկվար» Լեռնիկ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե որ ուսանողներին է կրթաթոշակ տրվում:

Արամ Սարգսյան (22 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է, որը մրցութային կարգով տրվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատության ուսանողին՝ գերազանց եւ լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսեւորելու համար, ինչպես նաեւ սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերի ուսանողներին: Ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներ են համարվում՝

1) մասնակցությունը ուսումնական հաստատության ուսանողական, հասարակական աշխատանքներին,

2) զեկուցումները, ռեֆերատները, հրատարակած աշխատանքները (գիտական ամսագրերում եւ զանգվածային լրատվության միջոցներում),

3) մասնակցությունը միջքոլեջային, քաղաքային, հանրապետական եւ միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին,

4) այլ ստեղծագործական նախաձեռնություններ՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատության հայեցողությամբ: Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունում պետական կրթաթոշակը տրվում է ուսանողական նպաստի համակարգում ընդունված ուսանողին:

Պետության կողմից կրթաթոշակ տրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից չֆինանսավորվող ուսումնական հաստատություններում կրթաթոշակի հատկացման մասին որոշումն ընդունում է հիմնադիրը:

ՀՀ կրթության, գիտության, սպորտի եւ մշակույթի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված եւ ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող 1-ին կուրսի ուսանողներին, ըստ սահմանված չափերի, համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում տրամադրվում է պետության կողմից ուսանողական նպաստի ձեւով ուսման վճարի մասնակի փոխհատուցում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ ով է անձին սահմանում հաշմանդամություն:

Տաթեւ Արիստակեսյան (60 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տ. Արիստակեսյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ անձին հաշմանդամություն սահմանելու նպատակով բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնում են բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինները՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գրասենյակի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը եւ տարածքային բժշկասոցիալական փորձաքննական բաժինները:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաշվառում չունեցող անձինք կարող են ենթարկվել բժշկասոցիալական փորձաքննության՝ ներկայացնելով տեղեկանք փաստացի բնակության վայրից: Օտարերկրյա պետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում կարող են անցնել բժշկասոցիալական փորձաքննություն, եթե տվյալ պետության հետ Հայաստանի Հանրապետությունն ունի համապատասխան միջպետական պայմանագիր:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Փետրվարին Բրյուսելի Սինեմատեկում կանցկացվի Համո Բեկնազարյանի ստեղծագործական ժառանգությանը, մասնավորապես՝ համր ֆիլմերին նվիրված ցուցադրություն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________
Ազգանուն՝ ______________
Առաքման հասցե՝ ______________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Մարզ	Ջերմաստիճան (գիշեր / ցերեկ)
Շիրակ	- 8 - 7 - 1 + 2
Կոտայքի լեռներ	- 3 - 7 - 2 + 2
Կոտայքի նախալեռներ	- 1 + 1 + 6 + 9
Գեղարքունիք	- 2 - 6 0 - 2
Լոռի	- 1 + 2 + 5 + 9
Տավուշ	+ 3 + 7 + 5 + 8
Արագածոտնի լեռներ	- 8 - 11 - 1 + 1
Արագածոտնի նախալեռներ	- 2 + 2 + 6 + 10

Մարզ	Ջերմաստիճան (գիշեր / ցերեկ)
Արարատ	0 + 2 +10 + 12
Արմավիր	- 1 + 1 +10 + 12
Վայոց ձորի լեռներ	- 3 - 5 - 1 + 1
Վայոց ձորի նախալեռներ	+ 2 + 4 +10 + 13
Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 +14 + 16
Սյունիքի նախալեռներ	- 1 + 4 + 6 + 11
ԼՂՀ	- 1 + 3 + 5 + 11
Երեւան	0 - 2 + 3 + 5

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **5.2.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*